# Միրաք

**Մակերես՝** 13.67կմ$^2$

**Բնակչություն՝** 90

Գյուղ Արագածի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 37 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Միրակ, Միրաղ, Մեծ Միրյակ անվանումները:
Գյուղի մոտակայքում կան հին գյուղատեղի եւ դամբարաններ: Այստեղ կան ավերված եկեղեցի եւ գերեզմաններ (V-VI դարեր):
Տեղադրված է Քասաղ գետի վերին հոսանքում: Գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի արեւմտյան լանջերին՝ ծովի մակարդակից 2025 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:
1831 թ-ին գյուղն ունեցել է 210, 1897 թ-ին՝ 558, 1939 թ-ին՝ 597, 1979 թ-ին՝ 199 բնակիչ: Գյուղի բնակչության թիվը կազմում է 129 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 39%, աշխատունակ ները՝ 45%, հետաշխատունակները՝ 16%: Գյուղն ունի առկա 32 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Տնտեսության համախառն բերքի մեծ մասը բաժին է ընկնում անասնապահությանը: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես արոտավայրեր, վարելահողեր: Քաղաքացիների սեփականությունը կազմում է համայնքի տարածքի մոտ 13%: Պահուստային հողերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն արոտավայրերը եւ վարելահողերը՝ կազմելով համապատասխանաբար 461 հա – 245 հա: Խոտհարքները զբաղեցնում են 40հա: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: